Արձանագրություն N 3

ԵՄ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի առաջին նիստի

ք. Երևան 23 փետրվարի 2018թ.

ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Մկրտումյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Երեմյանը, Ա.Մակյանը, Տ. Հարությունյանը և Ն. Յոլչյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ի.Հակոբյանը

1. ԵՄ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով մրցույթի հայտերի բացումը, օրը և ժամը

(Ս.Մկրտումյան)

1.1 «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2018 թվականի փետրվարի 23-ին, ժամը 10:30-ին:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և հասցեների հրապարակում

(Ս.Մկրտումյան)

2.1 Հայտեր ներկայացվել են հետևյալ մասնակիցների կողմից.

Մասնակիցների անվանումները	Հասցե
<<Արմես Գրուպ>> ՍՊԸ	ք. Երևան, Օհանովի 53
<<Էֆֆեկտ գրուպ>> ՓԲԸ	Ք.Երևան, Շիրակի 2/5
<<Էկոմիքս>> ՍՊԸ	Ք.Երևան, Լենինգրադյան 31/1, բն.28
<<Էքսպրես Շին>> ՍՊԸ	Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ 14/3, փ.3
Ա/Ձ Հակոբ Առաքելյան	Արարատի մարզ, գ.Գեղանիստ 15փ, 14փ
<<Հիդրո Գրուպ>> ՍՊԸ	Ք.Երևան, Ջրաշեն 1 փող, 2-րդ նրբ., տուն 1
<<Լանկա>> ՍՊԸ	Ք.Երևան, Կարդանանց 22
<<Լուվա>> ՍՊԸ	-
<<Նարգար>> ՍՊԸ	Ք.Իջևան,Երիտասարդական1/5
<<Պրովայդեր>> ՍՊԸ	Ք.Երևան, Միկոյան Փ 3/16
<<Ռեալ Բուսինեսս>> ՍՊԸ	Ք.Երևան, Ավրագիա 1/9
Ա/Ձ.Արմեն Մարգարյան	-

3. Հայտերը էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

(Ս.Մկրտումյան)

3.1 Ա/Ձ Արմեն Մարգարյանի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթը դատարկ էր՝ հրավերով պահանջվող ոչ մի փաստաթուղթ կցված չէր: Մյուս Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

(Ս.Մկրտումյան)

4.1 <<Լուվա>> ՍՊԸ-ի կողմից ARMEPS համակարգում բեռնված հայտում հայտի ապահովման հավելվածի տեղում կցված էր միայն վճարման պահանջագիրը, իսկ տուժանքի մասին համաձայնագիրը բացակայում էր:

4.2 <<Արմես Գրուպ>> և <<Նարգար>> ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտի ապահովման գումարը չէր համապատասխանում հրավերով պահանջվող չափին. ներկայացված պահանջագրերում նշված գումարները պակաս էին գնային առաջարկի 5 տոկոսից:

4.3 <<Հիդրո Գրուպ>>ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի հավելվածի մեջ 9-րդ չափաբաժնի գծով <<Ընդհանուր գինը>> դաշտը հավասար չէր <<ԱԱՀ>> և <<Արժեք>> դաշտերի գումարին:

4.4 Մյուս մասնակիցների կողմից էլեկտրոնային փաթեթներում ներկայացված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը համապատասխանում էին հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացված գների և մասնակիցների զբաղեցրած տեղերի վերաբերյալ

(Ս.Մկրտումյան)

5.1 Մասնակիցների կողմից ներկայացված գների և մասնակիցների զբաղեցրած տեղերի վերաբերյալ աղյուսակը կցվում է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների և պատասխանների մասին

(Ս.Մկրտումյան)

6.1 Մրցույթի շրջանակներում 2018թ-ի փետրվարի 17-ին ստացվել է հարցում և դրա վերաբերյալ գնահատող հանձնաժողովի կողմից տրամադրվել է պարզաբանում, որը սահմանված կարգով հրապարակվել է www.gnumner.am և www.armeps.am կայքերում:

7. Հանձնաժողովը որոշեց՝

(Ս.Մկրտումյան)

7.1 Մերժել <<Արմես Գրուպ>>, <<Լուվա>>, <<Նարգար>> ՍՊԸ-ների և Ա/Ձ Արմեն Մարգարյանի կողմից ներկայացված հայտերը և<<Հիդրո գրուպ>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտը միայն 9-րդ չափաբաժնի գծով՝ հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 41-րդ կետի պահանջները:

7.2 Կասեցնել <<**ԵՄ-ԳՀԱՊՁԲ-18/11**>> ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստը՝ հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 40-րդ կետի 5-ի բ ենթակետի պահանջները, քանի որ 4,13-14,20-22,36,55,57,58,64 և 65-րդ չափաբաժինների գծով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են գնումների պլանով սահմանված նախահաշվային գները:

7.3 Ծանուցել վերոնշյալ չափաբաժինների գծով հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներին գնային առաջարկների նվազեցման միաժամանակյա բանակցությունների վերաբերյալ, որոնք տեղի կունենան 2018թ-ի փետրվարի 28-ին, ժամը՝ 11:00-ին:

7.4 <<**ԵՄ-ԳՀԱՊՁԲ-18/11**>> ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած 6,7,11 և 16-րդ չափաբաժինների գծով՝ հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ

հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը/ոչ մի հայտ չի ներկայացվել/, և հաստատել վերոնշյալ չափաբաժինների գծով չկայացած ընթացակարգի մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս.Մկրտումյան)

8.1 «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի՝ գնային առաջարկների նվազեցման բանակցությունների նիստ հրավիրել 2018թ-ի փետրվարի 28-ին, ժամը՝ 11:00-ին, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ **Ս.Մկրտումյան**

Անդամներ՝ **Ա.Երեմյան**

Ա.Մակյան

Ն. Յոլչյան

Տ. Հարությունյանը

Քարտուղար՝ **Ի.Հակոբյան**